



Ապրիլի 20-ին Վիրահայոց Թեմի «Հայարտուն» կենտրոն այցելեց հանրաճանաչ երաժիշտ Տիգրան Մանսուրյանը քրոջ՝ Սոնյա Մանսուրյան-Աշքյանի հետ: Մաեստրոն Թբիլիսի էր ժամանել ներկա գտնվելու աշխարհահռչակ Կիմ Կաշկաշյանի մասնակցությամբ Վրաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգին, որի ծրագրում ընդգրկված էր նաև իր ստեղծագործությունը:

Հարգարժան հյուրերին ընդունեց Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը: Անվանի երաժիշտը մոմ վառեց և աղոթք բարձրացրեց Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում, եղավ «Հայարտուն» կենտրոնում: Մաեստրոն կենտրոնի «Գալուստ Գյուլբենկյան» սրահում հուզմունքով դիտեց Հայոց Մեծ Եղեռնին նվիրված վիրահայ նկարիչների «Հայոց Գողգոթա» խորագրով ցուցահանդեսին ներկայացված աշխատանքները:

Ականավոր երաժիշտը ներկա գտնվեց կենտրոնի «Սուրբ Ներսես Շնորհալիի» անվան կրտսեր երգչախմբի պարապմունքին և ունկնդրեց նրանց կատարումները, որից հետո գրուցեց «Սուրբ Գրիգոր Նարեկացիի» անվան կիրակնօրյա դպրոցի սանների հետ, դիտեց «Սուրբ Մովսես Խորենացու» անվան նախակրթարանի սանների «Գարնանը նվիրված

միջոցառման տեսագրությունը: Երաժշտության տաղանդաշատ վարպետը երախտագիտության խոսքեր ասաց Վիրահայոց Թեմի առաջնորդին, ում անմիջական ղեկավարությամբ «Հայարտուն» կենտրոնում իրականացվում է ազգանվեր գործունեություն:

Այնուհետև Տիգրան Մանսուրյանը և տիկին Սոնյա Մանսուրյան-Աշքյանը հանդիպում ունեցան թբիլիսահայ մտավորականության և մշակույթի ներկայացուցիչների հետ: Կայացած ջերմ գրույցի ընթացքում շոշափվեցին ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

Տիգրան Մանսուրյանը Վիրահայոց թեմի առաջնորդի հետ, թբիլիսահայ մտավորականության ուղեկցությամբ այցելեց հայ գրողների և հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոն, որտեղ ծաղիկներ դրեցին և մոմ վառեցին ու խնկարկեցին նախնիների շիրիմներին:

Նույն օրը երեկոյան թբիլիսահայ մտավորականության ներկայացուցիչները Վիրահայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանի հետ միասին ներկա գտնվեցին Թբիլիսիի Եվգենի Միքելաձեի անվան ազգային երաժշտական կենտրոնում Կիմ Կաշկաշյանի մասնակցությամբ և Նիկոլոզ Ռաճվելիի դիրիժորությամբ կայացած պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգին, որտեղ վրացի և հայ երաժշտասեր հասարակայնության ներկայացուցիչները ի թիվս այլ ստեղծագործությունների ունկնդրեցին Տիգրան Մանսուրյանի հիասքանչ երաժշտությունը: